«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատությունը՝ Մասիս քաղաքի թիվ 2 մսուր- մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Գայանե Խաչատրյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ 1. Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում:----------5

1.1 Ազգային տոներ և ծեսեր----------5

1.2 Ազգային տոների, ծեսերի կազմակերպման ներկայացվող պահանջները: ------6

Գլուխ 2 Ազգային տոների, ծեսերի պատմությունը և մանկական խաղերի նկարագրումը----------8

Գլուխ 3 Փորձարարական մաս----------13

Եզրակացություն----------15

Գրականության ցանկ----------16

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Ազգային ծեսը մշակույթի այն տարրն է, որը առավել պահպանողական է ազգային արժեքների պահպանման գործում: Ժողովուրդները հիմնականում տոնական օրերին են վերապահել ազգային խոհանոցի, ազգային տարազի, ազգային երգ ու պարի, ազգային խաղերի պահպանման ու ժառանգորդման գործը: Հայկական մշակույթը հնուց ի վեր, մինչ օրս էլ, աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով: Մշակույթը չէր պահպանվի, եթե գոյություն չունենային սերնդեսերունդ նրա փոխանցման միջոցները: Ծեսերի իրագործման գլխավոր նպատակներից մեկն էլ այն է, որ ազգային մշակույթի արժեքները չմոռացվեն:

Մանկապարտեզում սաները ծեսերի և տոների նախապատրաստման և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:

Աշխատանքի նպատակը

Մենք դաստիարակներս տոները և ծեսերը կազմակերպելիս ունենք նպատակ, ծեսը դարձնել երեխայինը, և որ նա լինի ոչ միայն մասնակիցը, այլև փոխանցող և տարածողը: Ծեսերը և տոները կազմակերպելիս սերտ համագործակցել երաժշտության դաստիարակի և պարուսույցի հետ, որ տոնը սաների համար ավելի հետաքրքիր դարձնենք և այն հագեցած լինի ազգային երգերով, խաղերով, պարերով:

Մենք ունենք շատ հետաքրքիր տոներ և ծեսեր, որոնք կազմակերպելիս կարելի է մասնակից դարձնել ծնողներին: Համատեղ աշխատանքը ավելի կուրախացնի և սաները հաճույքով կմասնակցեն:

Խնդիրները«

• Ուսումնասիրել թեմային առնչվող գիտական գրականությունը

• Ուսումնասիրել ազգային տոները և ծեսերը

• Ուսումնասիրել ազգային տոների և ծեսերի առանձնահատկությունները կրթական գործընթացում

• Ազգային արժեքների պահպանում, հայապահպան մտածողության ձևավորում

• Ազգային մշակույթային արժեքների պահպանման, փոխանցման գործում սեփական մասնակցությունն ունենալու պահանջմունքի ձևավորում« ստեղծագործելու, հետազոտելու, ինքնադրսևորվելու կարողություն:

Օբյեկտ« Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները մանկապարտեզում:

Վարկած« Որպես հետազոտող մանկավարժ առաջ եմ քաշել այն վարկածը, եթե նախադպրոցական ուսումնական հաստատություններում ազգային տոները և ծեսերը կազմակերպվեն և մասնակից դառնան նաև ծնողները, ապա այն կնպաստի սաների ազգային ճանաչողական կարողականությունը, ազգային ոգու բարձրացմանը, հայրենաճանաչողության ձևավորմանը:

ՀՀ պետական նախադպրոցական կրթական չափորոշչի հիմնական ծրագրում ներկայացվող պահանջներից է« ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների զուգորդումը:

Գլուխ 1. Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում:

1.1 Ազգային տոներ և ծեսեր

Տոների ձևավորումը և զարգացումը, որպես օրինաչափություն, պայմանավորված է սոցիալական, տնտեսական, պատմական, քաղաքական, էթնոմշակույթային և կրոնական գործընթացների փոխազդեցություններով: Արտացոլելով հասարակության մեջ իրականացվող այդ գործընթացները, տոները կատարում են էթնիկ ավանդույթների պահպանման և դրանք սերունդներին փոխանցելու կարևորագույն գործառույթներ:

Հայոց ավանդական կենցաղում տարածված տոները գրականության մեջ և կենցաղային ընկալումներում շատ հաճախ ներկայացված են« ազգային, ավանդական, ժողովրդական, կրոնական, քրիստոնեական և այլ հոմանիշ անվանումներով, որոնք համակողմանիորեն արտացոլում են մշակույթային այդ երևույթի էությունը: Որակավորումների այդ համատեքստերում իրոք, երբեմն դժվար է սահմանազատել կրոնականը ժողովրդականից կամ ազգայինից, քանի որ նշված հատկանիշները դարերի ընթացքում միահյուսվելով, կազմել են գրեթե անբաժանելի միասնություն:

Հայկական մշակույթը հնուց ի վեր, մինչև օրս էլ, աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից:

1.2Ազգային տոների, ծեսերի կազմակերպման ներկայացվող պահանջները:

Նախադպրոցական տարիքի երեխաների հետ տարվող կրթադաստիրակչական աշխատանքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ազգային տոների և ծեսերի կազմակերպումը:

Աշխարհի ժողովորդների նկատմամբ դրական վերաբերմունքի, բազմամշակույթային դաստիրակության հիմքերը դրվում են ազգայինի մեջ համամարդկայինը ընդգրկելու միջոցով: Դրանք բացահայտվում են ազգային մշակույթին« գրականությանը, արվեստին, ճարտարապետությանը, քանդակագործությանը, ազգային ավանդույթներին, հերոսական պատմությանը, պարերին, երգերին, առածներին, ասացվածքներին երեխայի ծանոթացման ընթացքում:

Մանկավարժության բազմաթիվ հարցադրումների շարքում առանձնանում է երեխաների որոշակի տարիքային խմբի համար կազմակերպվող միջոցառումների հարցը: Եթե առաջնորդվենք այն սկզբունքով, որ կրթության մեջ կարևոր խնդիրներից մեկը երեխայի անհատականությունը պահպանելն է ու նրա ճաշակը զարգացնելն է, ապա միջոցառումների կազմակերպումը պահանջում է նոր մոտեցումներ:

• Տոների կազմակերպումը և անցկացումը երեխաների համար պետք է լինի ոչ թե պարտադրանք , այլ սանը պետք է անհամբեր սպասի այդ տոնին:

• Տոնը սաների համար պետք է լինի անակնկալներով լի, գրավիչ և հետաքրքիր:

• Տոնի կազմակերպման նպատակը կարող է լինել սաների ինքնավստահության, ազատ շփվելու, ներկայանալու և ներկայացնելու, շրջապատը զգալու և գնահատելու կարողություն:

• Տոներին և ծեսերին պետք է մասնակցեն խմբի բոլոր սաները: Երեխան անչափ ոգևորվում է , երբ իր կողքին տեսնում է երգող մեծահասակներին և ընկերներին:

• Շատ կարևոր է ապահովել սանի մասնակցությունը տոնական սեղանների, խորհրդանիշների, նվերների, բացիկների պատրաստումը:

Սաների հետ կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառում, տոնահանդես, ազգային, եկեղեցական, ժողովրդական տոներին նվիրված ցերեկույթ նպաստում է երեխայի գիտելիքների, հիշողության, երևակայության, ստեղծագործ մտքի զարգացմանը և նրա անձի ձևավորմանը: Յուրաքանչյուր տոնի կազմակերպում պետք է ունենա իր առանձնահատուկ նպատակը, ձևը և գրավչությունը: Ուստի մենք դաստիրակներս տոների անցկացմանը պետք է նախապատրաստվենք հաշվի առնելով սաների անհատական առանձնահատկությունները և կարողությունները: Տոները և ծեսերը պետք է ուղեկցվեն երաժշտությամբ, համապատասխան կահավորմամբ և զարդարանքով:

Ընտանեկան տոների կազմակերպումը մանկապարտեզում երեխաների և ծնող և դաստիարակի միջև հաղորդակցության ձևերից մեկն է: Նման տոները ուղղված են տարբեր խնդիրների լուծմանը: Մեծահասակների այս զարգացումը հնարավորություն է տալիս տարբերակել երեխաների հուզական վիճակները, հեշտացնել կապը երեխաների և մեծահասկների միջև:

Գլուխ 2 . Ազգային տոների, ծեսերի պատմությունը և մանկական խաղերի նկարագրումը

Ազգային մշակույթի յուրացումը դրված է նախադպրոցական ծրագրերի հիմքում, այս դեպքում ազգային ծեսերի իրականացումը դառնում է յուրացման համար հենակետերից մեկը, քանի որ այն արդյունավետ և նոր կազմակերպման ձևերից:

Ազգային տոները, ծեսերը իրականցվում են խաղերի միջոցով, քանի որ խաղերը համարվում են սաների ուսուցման և դաստիրակման բաղկացուցիչ մասը: Դեռ վաղ տարիքից երեխաները ճանաչում են ազգային խաղերը, նրանց մոտ ավելանում է շրջակա աշխարհի մասին պատկերացումները:

Ծիսական խաղերը, բացի հետաքրքիր և տպավորիչ լինելուց , զարգացնում են մանր և խոշոր մոտորիկան, ընդհանուր շաժումային համակարգը, դրանք թատրոնի նման սինթետիկ արվեստ են դառնում, որոնք ինտեգրում են ինչպես երեխայի զարգացման բոլոր ոլորտները, այնպես էլ գործունեության տարբեր ձևերը:

Այստեղ փորձել եմ առանձնացնել մի քանի ազգային տոների, ծեսերի պատմությունը և խաղերի նկարագրումը, որոնք երկար ճանապարհ են անցել հեթանոսությունից մինչև քրիստոնեություն:

Տարբեր ծեսերի ու տոնակատարությունների երգերը պատկերում են կենցաղի մեջ արմատավորված զանազան արարողությունները, սովորությունները, նկարագրում ամբողջ տոնակատարությունները և այլն: Տոնակատարություններից հատկապես ճոխ են եղել և բոլորին մեծ զվարչություն պատճառել Համբարձումն ու Վարդավառը, կամ ջրի, ծառի ու ծաղկի պաշտամունքի տոները:

Համբարձման տոնը թեպետ կատարվում է Քրիստոսի համբարձման օրը, որի մասին կան հիշատակություններ, ժողովրդական խաղիկներում, բայց պետք է ենթադրել, որ այն գոյութուն է ունեցել նախաքրիստոնեական շրջանում: Ըստ ժողովրդական հավատալիքների, Համբաձման գիշերը իբրև թե բոլոր բույսերը իրար հետ զրուցում են, ջրերը ոոպեական կանգ են առնում, գերբնական զորություն ստանում, եթե այդ ջրի մեջ որևէ առարկա գցեն ու ցանկություն հայտնեն« ոսկի

կդառնա, բուժիչ հատկություն կունենա և այլն: [Յուլբաշյան Յու, Վ. Փահլեվանյան Ա.Ա., Ա.Հ. Լուսինյան, <<Զանգակ>> հրատարակչություն Երևան 2014]

Համբարձման մանկական խաղերից է <<Ծաղկահավաքը>>:

Համարձման ծիսական գլխավոր գործողություններից է« Ծաղկահավաքը:

Մանկապարտեզում այն կարելի է վերածել խաղի, որտեղ աղջիկները կլինեն ծաղիկներ, իսկ տղաները« մեղուներ, բզեզներ, զատիկներ: Ցանկալի է, որ սաներն ունենան համապատասխան հանդեձանք: Ծաղիկները, որևէ կանաչապատ տարածքում խառը կանգնում են և թեթև օրորվում: Մեղուները, բզեզները, զատիկները բզզալով մոտենում են ծաղիկներին , յուրաքանչյուրը ընտրում է իր զույգին: Մեղուները, փոքրիկ դույլերը ձեռքին հյութ են հավաքում ծաղիկներից: Հյութը հավաքելուց հետո միասին, երկու ձեռքերից բռնած, պտտվում են տեղում: Զույգերով երգելով գալիս են և ծաղիկները առանձնանում են, կքանստում, ստեղծում ծաղկեփունջ: Բզեզները, մեղուները, զատիկները, իրար ձեռք բռնած պտտվում են նրանց շուրջ և երգում համբարձման ծիսական« <<Վիճակի երգը>>:

[<<Հայ ժողովրդական խաղեր>> Վ. Բդոյան]:

Ծաղկազարդ կամ ծառզարդար

Ամենագեղեցիկ, լուսավոր, ծիծաղաշատ, ուրախ տոներից է Ծաղկազարդը, իր անվան արմատի« <<ծառ>> կամ <<ծաղիկ>> նման անարատ, բուրավետ և լուսառատ:

Զատկի տոներից մեկ շաբաթ առաջ Հայ Առաքելական եկեղեցին նշում է Ծաղկազարդը: Այն խորհրդանշում է Քրիստոսի մուտքը Երուսաղեմ: Տոնի ժամանակ բացվում է եկեղեցու խորանը և մարդիկ եկեղեցուց օրհնված ուռենու կամ ձիթենու ճյուղեր են տանում տուն, որոնք էլ համարվում են չարխափան: Մարդիկ այդ ճյուղերը պահում էին տանը կամ ամբարներում, որպեսզի տարին առատ ու բարիքով լի լիներ և հիվանդությունները վերանային:

Սակայն, դեռևս հեթանոսական ժամանակներից մարդիկ տոնել են Ծավկազարդը, որը նվիրված է եղել ծառի պաշտամունքին: Այն հնում կապված է

եղել բնության զարթունքի, գարնան գալստյան մեռնող և հարություն առնող բնության աստվածության հետ« Արա Գեղեցիկի հովանավորչությամբ: Հնում հայ ժողովրդի մեջ եղել է որոշ ծառերի պաշտամունք, ինչպիսին են« ուռենին, սոսին, խնկենին, կաղնին, որոնք ունեցել են տիեզերքի հավերժականության, պտղաբերության և կենաց ծառի խորհուրդ:

[Խառատյան-Առաքելյան Հ Խ 310 հայ ժողովրդական տոներ:]

Խաղ« ուռենու օրհնված ճյուղերով երեխաները դանդաղ, հանգիստ քայլերով, ուռենու ճյուղերը գլխավերևում ճոճելով, գալիս են ու շրջանով պտտվում: Ընթացքում կազմում են զույգեր: Շրջանը ուղիղ գծով շարվում է, զույգերը դառնում են դեմքով իրար« երկու քայլ իրարից հեռու և ճյուղերով կազմում կամար: Վերջին զույգը անցնում է կամարների տակից և առաջանալով կանգնում շարքի դիմաց նախկին դիրքով: Նույնը կրկնում են մյուս զույգերը: Վերջին զույգի անցնելուց հետո, քիչ-քիչ հեռանալով, կազմում են շրջան ու թևերը կռունկների նման հանգիստ թափահարելով, շրջանով պտտվում: Այդ ընթացքում մի քանի երեխա զնգացնում են զանգերը:

Սուրբ Զատիկ

Ամբողջ քրիստոնյա աշխարհում Զատիկը համարվում է Քրիստոսի հարությանը տոնը: Զատիկ անվանումը առաջացել է զատել բառից, որը նշանակում է զատվել և հեռանալ մեղքերից և վերադարձ առ Աստված: Այն համարվում է եկեղեցական 5 տաղավար տոներից մեկը և այս օրն ամբողջ քրիստոնյա աշխարհը տոնում է Քրիստոսի հարությունը, իրար հայտնելով ավետիսը <<Քրիստոս հարյավ ի մեռելոց>> և ի պատասխան ստանալով <<Օրհնյալ է հարությունը Քրիստոսի>>:

Սակայն հայոց աշխարհում զատկի տոնի արմատները շատ ավելի հին են: Զատիկը հնում համարվում էր գարնանացանի տոնը և նվիրված էր Անահիտ դիցուհուն, ով էլ հովանավորում էր մայր հողի բեղմնավորումը:

Զատիկը շարժական տոն է, այսինքն յուրաքնչյուր տարի նրա նշման օրը փոխվում է: Տոնին բոլորը սպասել են անհամբեր: Դրան նախորդել է 40 օր պաս

պահելը: Զատիկին մարդիկ երկար են նախապատրաստվել« մատաղի միջոցներ են հավաքել, յոթ բաղաջ են թխել, ձու են հավաքել, հրաժարվել են խնջույքներից, հարսանիքներից, մաքրությամբ են զբաղվել, տարբեր միջոցների են դիմել հիվանդություններից, հրդեհներից, չար ոգիներից, երաշտից, ջրհեղեղներից ազատվելու համար: Տոնի նախօրեին և տոնին մարդիկ միմյանց ողջունել են Քրիստոսի հարության առթիվ, մասնակցել են պատարագի, հավաքվել են

Ծիսական սեղանի շուրջ«պասից դուրս են եկել, մատաղ են արել, ներկած ձվեր իրար նվիրել, ձվակռիվներ, պարեր ու խաղեր կազմակերպել:

Զատկի տոնին բնորոշ են ձվախաղերը:

Ձուկոտրոցի

Ձուկոտրոցին խաղում են երկուսով: Մրցակիցներից յուրաքանչյուրը խաշած, բայց և չկոտրված ձու պետք է ունենա: Խաղի նպատակն է պարզել, թե ում ձուն է ավելի ամուր: Խաղացողներից մեկը ձուն պետք է բռի ափի մեջ« բութ մատի և ցուցամատի օղակմամբ, չծածկելով ձվի քիթը, իսկ մյուսը պետք է աշխատի իր ձվի քթով հարվածել խաղընկերոջ ափի մեջ բռնած ձվի քթին այնպես, որ դիմացինի ձուն կոտրվի:

Ձուպտտոցի

Խաղի համար մեկին դատավոր են ընտրում, որ հրահանգ տալուն պես որևէ հարթ մակերեսի փորձում են սուր քթի վրա միաժամանակ պտտեցնել ձվերը: Ում ձուն ավելի երկար պտտվի, նա էլ հաղթող է ճանաչվում և մյուս բոլոր խաղացողների ձվերը շահում:

[Ռ.Հարոյան, <<Զատիկ>>, Եր. <<Շաղիկ>>, 1996.թ., 104 էջ Հ397]

<<Բերքի տոնը>>

Ծեսերը սաներին մատուցվում են հետաքրքիր, մանկական մտածողության ու հնարավորություններին համապատասխան, համեմված խաղիկներով ու ասացվաքներով: Ծեսի մատուցման ընթացքում մանկապարտեզի սաների

մասնակցությամբ ներկայացվում է, թե ինչպես էին հայերը նշում այս գեղեցիկ ու բերքառատ տոնը: Ազգային երգն ու պարը, խաղերը սաների գունեղ տարազները, հայկական բերքով ու բարիքով լի զամբյուղները, տաղավարների ձևավորումը, ստեղծում են հին ավանդական մթնոլորտ:

<<Ամանոր>> Նոր Տարի

Երբ պատրաստվում ենք ամանորյա միջոցառումներին, մանկապարտեզում կարծես կախարդական շունչ է իջնում: Գույնզգույն զարդարված սենյակներում թևածում է Ամանորի շունչը: Մանկապարտեզի բոլոր խմբերի սաներն ու ողջ անձնակազմը գեղեցիկ տոնական ցերեկույթներով անփոփում են անցնող տարին: Երեխաները ձմռանն, Ամանորին, Սուրբ Ծննդյան ու Ձմեռ պապին ուղղված շնորհավորական ուղերձներով, բանաստեղծություններով, երգով, պարով ու բեմադրություններով պատմության գիրկն են ուղարկում հին տարին և նոր հույզերով ու անակնկալներով բացում են դռները նոր տարվա առջև: Միջոցառումները անփոփում է, շատ սպասված Ձմեռ Պապին, որը ուրախացնում է երեխաներին և նրանց նվիրում նվերներ:

Փորձարարական աշխատանք

Համաձայն հետազոտության վարկածի փորձեցի կազմակերպել Ծաղկազարդի տոնը: Շատ կարևոր է, որ սաները դեռ փոքր տարիքից մասնակից դառնան եկեղեցական տոներին և ծեսերին: Քանի որ Ծաղկազարդը նվիրված է մանուկների օրհնությանը երեխաները ավելի շատ են ոգևորվում: Ծնողներին նույնպեսն կարելին մասնակից դարձնել տոնի կազմակերպմանը: Նրանք երեխաների համար պսակներ են հյուսում ուռենու ճյուղերից, Ծաղկազարդի համեղ քաղցրավենիք են թխում: Որքան էլ երեխաներին բացատրում ես եկեղեցական տոների մասին, այդքան չի տպավորվում նրանց մեջ: Բայց, երբ երեխան մասնակից է դառնում տոնին, երգեր է երգում, բանաստեղծություններ է ասում, դերեր է կատարում ավելի շատ է հասկանում տոնի իմաստը:

Ծաղկազարդի տոնի փորձարկումը իրականացրեցի ավագ խմբում: Առաջին պարապմունքին սաներին ծանոթացրեցի տոնին, որ այն ավետում է գարնան գալ և խորհրդանշվում է Հիսուսի մուտքով դեպի Երուսաղեմ, իսկ հիմա այդ օրը կատարվում է մանուկների օրհնության կարգ: Երկրորդ պարապմունքի ժամանակ սաները սովորեցին <<Ծաղկազարդ>> երգը: Երրորդ պարապմունքի ժամանակ սաները ծանոթացան Ծաղկազարդի ժամանակ անցկացվող խաղերին: Երեխաները նախապես ուռենու կամ բարդու ճյուղեր են հավաքում և ներկում կարմիր: Խաղացողներից մեկը այդ ճյուղը հենում է պատին, իսկ մյուսը հարվածում է իր ճյողով, հաղթում է այն խաղացողը ում ճյուղը չի կոտրվում: Տոնի երգերը, պարերը, խաղերը, դերերը և ասույթները յուրացնելուց հետո կազմակերպեցի ցերեկույթ: Ցերեկույթի ժամանակ արտահայտեցին իրենց գիտելիքները տոնի խորհուրդի, եկեղեցու մասին: Հյուրերին հուրասիրեցին ծաղկազարդի ամենահամեղ քաղցրավենիքը, որի մեջ կար հաջողության մետաղադրամը: Սաները ներկայացան ազգային հագուստներով և ուռենու պսակներով: Քանի, որ տոնը կազմակերպել էի հաշվի առնելով սաների տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրությունների շրջանակը, տոնի իմաստի ընկալումը հաջողվեց:

Ծնողները նույնպես շատ ոգևորված էին, օգնեցին տոնի կազմակերպչական հարցերում: Այսպիսով, հետազոտության սկզբում առաջ քաշած վարկածը համարում եմ հաստատված:

Եզրակացություն

Վերլուծելով թեմայի վերաբերյալ գրականությունը և կատարելով փորձարարական աշխատանք ես եկա այն եզրահանգման, որ պետք է անել ամեն ինչ, որպեսզի մեր ազգային մշակույթը չկորչի: Իսկ դրա պահպանման համար պետք է երեխաների մեջ դեռ մանկուց սերմանել« հայրենասիրություն, ազգային ոդու բարձրացում, սեր և նվիրում մեր ազգային մշակութի հանդեպ:

Ծեսերի միջոցով զարգանում է սանի ստեղծագործելու ունակությունը, ուշադրությունը, շարժուբակությունը, վարքը, ակտիվությունը, ինքնուրույնությունը, ճանաչողությունը և մի շարք այլ հմտություններ ու կարողություններ:

Ազգային տոների և ծեսերի անցկացումը կարևոր նախապայման ու հարմար միջավայր է երեխայի խոսքի զարգացման հաղորդկցման համար: Ծեսի կազակերպման ընթացքում նրանք խոսում և հաղորդակցվում են անկաշկանդ, փոխանցում մտքեր ու կարծիքներ:

Առաջառկություններ.

1. Ազգային տոների և ծեսերի կազմակերպումը կլինի ավելի արդյունավետ, եթե այն անցկացվի երեխաներին հասանելի ձևով:

2. Մասնակից դարձնել ծեսերի կազմակերպմանը և ուսուցմանը ծնողական կազմին:

3. Կազմակերպել փոքրիկ էքսկուրսիաներ մշակույթային կենտրոններ:

Գրականության ցանկ

1. Խառատյան-Առաքելյան Հ Խ 310 Յայ ժողովրդական տոներ: Եր., <<Զանգակ-97>> 2005-360 էջ
2. Մկրտչյան Ս., Տոներ Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն) , Ե., 2010, էջ 101
3. Յուզբաշյան Յու. Վ. Փահլեվանյան Ա.Ա., Ա.Հ. Լուսինյան, <<Երաժշտություն>> <<Զանգակ>> հրատարակչություն Երևան 2014
4. <<Հայ ժողովրդական խաղեր>> Վ. Բդոյան
5. Ռ. Հարոյան, <<Զատիկ>> , Եր. Շաղիկ 1996թ., 104 էջ Հ 397
6. Լ. Թերլեմեզյան . Կոմիտաս Հոդվածներ և ուսումնասիրություններ Երևան , 1941